



Կարենիք ամեն օր կ'սիրատարակուի, բարեկամ զինք և Պոլսոյ և Գաւառաց համար 7 արծար մեծիւր կ'անխիկ Գաւառացիք և Գաւառաբնակ ծախքը մեր վրայ և: Վեցամեայ և եռամեայ բաժնորդք ալ կընդունուին:

Լազարոյ վերաբերեալ գիր կամ համար պիտի և ուզէի առ Տէր-Խմբ գիր ինչա փայտ յուն 9-44: Խմբագրութեան ուղղեալ գիր հա ը տրուի: Ծանուցում օրացմեկ անգամ համար 3 պրոպ և: անկի ալ գամի համար օտարաբնակ կըլլայ:

ԱՂԳԱՅԻՆ

Ուշադրութեան արժանի է հետեւեալ յօդուածը: Նիկովիցիա 10 Օգոստ. 1883

... Խմբագիր Տէր

Մինչդեռ ամեն ողջամիտ Հայ բոլոր յայն իւր ամենաօրերէն Պատրիարքին վերայ գնելով նորանոր բարւոյններ կ'ակնկալէր՝ ազգային ներքին կացութեան նկատմամբ, ահա առիկ անակնկալ դէպք մը ի սպառ վեր ի վայր յեղաշրջեց նորա ակնկալութիւններն: Ազգ. Ժողովոյ 1883 օգոստոս 5 ուրբաթ աւուր նիստը խիստ աղմկալից և խառնաշփոթ եղաւ, մեծ խայտառակութիւնը տեղի ունեցան անդ, և ամենացաւալի եղբակցութեան մը յանգեցաւ:

Հայ ազգը ամբողջ մի տարի առանց Պատրիարքի անդուխտ մնալէ զկնի, յետ ամենամեծ դժուարութեանց հազիւ ուրեմն իւր պատուական և իմաստուն Պատրիարքին իւր աթոռ վերադարձն իրնդուութեամբ ողջունելով՝ խաղաղութեան երես տեսնել կը կարծէր, և ահա անուստի միջադէպ մը, որ տեղի ունեցաւ երեսփո. Ժողովոյ անցեալ նստի մէջ, յօդքոց ցնդեցուց մէն մի Հայու յայնն ու ակնկալութիւններ: Մտերոյ ներքե ծածկուած կայծն յանկարծ բանկելով պայթեցաւ. մի քանի բաղաձայններ երեսփոխանաց օրերով պատրաստած ծրագրերն պատեհ աւելի գտնելով երևան եկաւ, որուն յաջորդեցին անսահման յարձակումներ և ախուր պարագայներ, խայտառակ բանակաւներ և հուսկ ուրեմն Պատրիարք Սրբազանին վերջիտական և անդառնալի հրաժարականն: Եւ որ ամենէն ցաւալին է, պայքարն այնքան յաւաջ գնաց և բուռն կերպորանք մ'ընտացաւ, որ մինչև իսկ անդուսպ և անխօսեմ բերաններ համարձակեցան հարկութեան վտանգաւոր գաղտնիքներ ալ հրապարակ հանել՝ առանց հետևանաց ծանրութիւնը կշռելու: Ահա առիկ աղետալի տեսարան մը, որոյ վերայ արգահատելէ աւելի զզուանք կզգայ ամեն լիտայուն և լրջամիտ Հայ, և չէ կարելի անտարբեր աչք լսի հանդիսատես ըլլալ:

Իրաց այս ողբալի վիճակին մէջ ցաւ է ինձ յայտնել՝ որ ալ այսուհետև երեսփոջովը, որ ամբողջ հայութեան միակ յենարանը և նորա բոլոր պատիւն էր, իս.

պառ կործնուց իւր նախկին բարձր գիրքն ու պատկառածքը: Սա եղաւ պարզ կատելիւնաց մը, ուր ամեն տեսակ լիցու և խօսակցութեան ձևեր անօտար կը գործածուին. ուր ամեն անհեղեղ և արատաւոր բռնութեան նկատմամբ հասն և ինքեքոր դարու մէջ նախկին ամիրայական դրութեամբ կառավարուած ժողովներ այլևս անզգացուցիչ համարուելով, մի քանի ակամաւոր Հայեր ելան Սահմանադրութիւն մը խմբագրեցին, և որոյ գործադրութիւնը բարեխը նստ կոյտեր ընդունել տալու համար բընու ջանք չը խնայեցին. ինքեանք եղան ակզբնապատճառ և առաջնորդ, այլ միտնաբան ինքեանք եղան առաջին անգամ և խիստ քիչ տեսնի մէջ զղուելով ետ քաշուղները՝ փորձաւապէս և լաւագոյնս համոզուելով որ մեր ազգը առկաւին ըստ մեծի մասին անկարող և շատ հեռի է սահմանադրապէս, այսինքն գիտակցութեամբ կառավարուելէ:

Ընդդիմախօսք կուղեն աւարկել թէ՛ Ներսէս Պատրիարք արտաքին երևոյթով ինքզինքն ազգին անձնուէր ցոյց տալ կեղծելով ի ներքուստ ոչինչ գործեց, ի մասին ներքին բարենորոգութեան: Արդարև մեր նպատակը Ներսէս Պատրիարքին անձը գովարանել չէ, մանաւանդ թէ ցաւելով կը խօսաւորանինք որ նա բան մը չկրցաւ ընել իւր ընտրութեան օրէն ի վեր. օակայն կը հարցնենք ամեն լրջամիտ անձանց թէ ո՞վ էր և ո՞վ է այն անձը, որ Ներսէսի տեղ Սթոն Պատրիարքութեան բարձրանալով, իրաց սա անկերպարան քառօին մէջ պիտի կարողանայ օրինաւոր պատրիարքութիւն ընել անբարեի կեանք վարել և ազգին ներկայ կացութիւնը կանոնաւոր և ընթացիկ վիճակի մէջ պահել, եղբակ այն անձին, որ Ներսէսի անկումէն օգուտ քողել ուզելով Սթոն Պատրիարքութեան բարձրանալ պիտի յաւակնի: Եթէ Ներսէս Պատրիարք շատ մը կարևոր իրաց և գործածութեանց մէջ թերացաւ, դոնէ սա իմաստութիւն և աւաւելութիւնն ունեցաւ նա՞ որ զինքն ազգին մեծագոյն մասին սիրելի և պատկառելի ներկայացուց:

Ծաւալի է յոյժ՝ որ ազգն այսօր սահմանադրապէս կառավարեալ ազգ մ'ըլլալով հանդերձ՝ առկաւին ամեն բան Պատրիարքին կակնկալէ: Սա միայն այն տեսն կրնայ օգտակար ծաւալութիւններ

մատուցանել ազգին՝ երբ խելահաս, պատուաւոր և անձնուէր անձերէ բաղկացեալ երեսփոխանութեան վրայ կը յենու, որ ի պահանջել հարկին կարող է ամեն կարելի զոհողութիւն նմա ընձեռել: Որպէս զի ազգային երեսփոխանութիւնն ալ այդ պատկառելի վիճակին վերածուի, հարկ էր նախ՝ որ քուէտրկուր գաղափար ունենան թէ ինչ գործադրութիւն կը կատարեն. այդ ալ թողորու և մանաւանդ գաւառներու մէջ կրթութիւն տարածուելով կըլլայ, բան մը՝ որ այսօր մեծ մասամբ դեռ ևս գոյութիւն չունի ընդհանրապէս:

Ահա Հայոց սիրելի Պատրիարքն ի մեծ ցաւ ազգին այսօր վերջնապէս կը հրաժարի ի Պատրիարքութենէ: Թերևս մի քանի անաշուղ շարժումներէ վերջը հարկադրինք յուսահատաբար նորա հրաժարական ընդունելու դառն եզրակացութեան յանդիլ՝ եթէ բարձրագոյն ձեռք մը չուղէ միջամտել խնդրոյն: Ազգն անշուշտ առանց գլուխի չը կրնար մնալ: Բայց ո՞վ պիտի գնե՞ր նորա տեղ, որ կարող ըլլայ մեր յայտերն իրականացնել և իրմէ սպասուած արգիւններն ի գլուխ հանել քանի որ ազգային կացութիւնն օտ վերայնկարագրեալ ողբալի վիճակին մէջ է: Մեր այս անհեթեթ կացութեան մէջ երկու կարգի անձինք միայն կան Պատրիարքութիւն ընելու՝ որ Ներսէսի Պատրիարքութենէն տարբերի:

Առաջին կարգին կը վերաբերին այն խել մը թուլամարմին և անզգայ եկեղեցականք ամիսէր չիւրիւսեաններ, որք իրենց ծայրայեղ անկարողութեամբ և անտարբերութեամբ ազգին գործերը բաղդին հոռուաց պիտի մատնեն, որով արժանաւորք մէկ կողմանէ յուսահատելով գործէ պիտի քաշուին՝ իսկ միւս կողմանէ բաղաձայնները հեռուցեալ ազգային գործոց մէջ մաւտ գտնելով, իրենց քմաց համեմատ պիտի կառավարեն, մեր արդէն իսկ խարխուլ և անհաստատ իշխանութիւնը մինչև իսպառ ջլատեն զայն, և իրաց վիճակն հասցնեն այն կէտին, յորում այլևս ազգը բաղդին խաղալիք դառնայ հանգստի յուսակաւոր հիւանդի մը, որ առողջութենէ գլխավին ճարահատեալ ինքզինք ճակատագրին կը յանձնէ:

Իսկ երկրորդ կարգին կը վերաբերին, այն խել մը բարբարոս եկեղեցականք,



որ երբ անգամ մը կը բարձրանան ի գահ Պատրիարքութեան, այլ ևս օրէնք և Սահմանադրութիւն իրենց համար բնաւ նշանակութիւն և արժէք չունենալով Յիսուսի նման խորազանու տաճարէն դուրս վանեն անարժան և բախտախնդիր անձինք: Ոմանք այս կարգի Պատրիարքի մը ակնհայտ կամ անհայտ պիտի ըսեն գուցէ, ինչ կուզեն թող ըսեն, կը բաւէ որ քանի ազգը կազմաւ այդ անասկ պատառարոյժ և անկալէզ անհասանելի և հետեւապէս ազդային իշխանութիւնն ալ զերծ կը մնայ յարատեւ ճնշումէ: Եւ ժամանակ և պատուաւորը կը քաջալերուին և Ազգային ժողովը պատկասելի դիրք մը կտանայ դէմ այսուհետեւ:

Ըստ օրում մեր ազգն անհրաժեշտներքին բարենորոգման պէտք ունի և առանց անոր անկարելի է այլ ևս իւր գոյութիւնը պահպանել: այդ բարենորոգումն ալ բարենորոգիչ Պատրիարք մ'ունենալով կրնայ ձեռք բերուիլ, որուն պէտք է լիովին օժանդակէ ազգն համայն: Անկեղծօրէն կը խոստովանիմ որ մեզ համար դարուս պահանջմանց յարմարային Պատրիարքը ներուէս արքեպիսկոպոսն էր, զոր չը կրցինք դժբաղդաբար օրոշահել կամ քաջալերել իւր գործոցը մէջ: Արդ կը մնայ մեզ այժմ գտնել մի Պատրիարք, որ ըստ պահանջման ժամանակին կէս օտոմանդրապէս և կէս բանապետար կաւալորէ զԱզգը, որոյ հետ գուցէ ակնածանօք վարուիլ ունինք ալ այսուհետեւ, զի բացարձակ Սահմանադրականութիւն, կերևի թէ գեւ ևս մեր արգի կըթուլան օգուտն համապատասխան չէ:

Այսօրիկ են անաւանիկ իմ խոնարհ կարծիքս ի մասին Պատրիարքական խոնարհութեան, զորս անկեղծօրէն լրջամիտ անձանց դատողութեանը յանձնելով կը խնդրեմ որ լաւ սերտեան օրուան այս մեծ և փափուկ խնդիրն և ըստ այնմ գործեն, զի մի՛ գոցէ յախուսն կատարուած գործողութիւնը ապաշուել տան մեզ ապագային:

Յուսալից եմ Տէր Խմբագիր, որ ներկայս ձեր պատուական թերթին մէջ պիտի հիւրնկալել բարեհաճիք:

Գաղափարային Բժիշկ Նիկոմիդիոյ  
Գաւառին  
Տօքթ. Գ. ձերանեան

... Խմբագիր Տէր

Սեթեան Միհրան էֆ. ի ստորագրութեամբ պաշտօնական յայտարարութիւն մը կարգացինք լրագրաց մէջ Մնակեան ժառանգութեան խնդրոյն վրայ, որոյ նկատմամբ փոփոխեան էֆէնտի վերջին ընդհանուր ժողովոյն մէջ յայտնութիւններ ըրած էր, որոնց մէկ քաղաւածը կարգացինք լրագրաց մէջ:

Ինչ որ փոփոխեան էֆէնտի յայտարարելէ յետեւնի երեւոյթական ժողովոյ, ճշմարիտ են, և ի դուր Սեթեան էֆէնտի կը քանի ջրել զանոնք:

Սեթեան էֆ. յանուն Տնտես. խորհրդոյ կը փաստաբանէ թէ՛ Մնակեանի կրտակն օրինաւոր և վաւերական է. բայց

Սեթեան էֆ. էն կամ Տնտես. խորհրդէն սուրիշ բան չէինք կրնար սպասել, քանզի Սեթեան էֆ. իւր ըսկերոզ Տնտես. խորհրդոյ միւս անգամ Բարադամեան Տիգրան էֆ. ի նոյն կտակաւ 1200 սակի ժառանգելու իրաւունքը պարտական էր այնպէս փաստաբանել: Նոյնպէս Սեթեան էֆ. կը փաստաբանէ թէ 1000 սակի սուտ ժառանգորդաց արուած է «թէրքի տավա» և արէֆի նիզտի համար, պարտական էր այդպէս ընել, քանզի այդ 1000 սակին տալու զմեզ պարտաւորող Տնտես. խորհրդոյն անգամ էր այն ատեն Սեթեան էֆ.: այժմ դարձեալ Տնտես. խորհրդոյ անգամ լինելով, պաշտօնական անուան ներքեւ իրենց արարքը ծածկել պիտի ջանայ:

Այդ պատճառաւ, ինչպէս մինչև ցարդարդի Տնտես. խորհրդոյ քննութիւնն և որ և է միջամտութիւնն մերժած ենք վարչութեան աւել, նոյնպէս կը մերժենք Տնտես. խորհրդոյ այժմեան այդ պաշտօնական յայտարարութիւնն, քանզի Տնտես. խորհուրդը գրեթէ կը բաղկանայ Սեթեան Միհրան էֆ. է և Բարադամեան Տիգրան էֆ. է (կը կործինք թէ՛ օւրիշներ չկան իրենց հետ, եթէ կան ինչ, արդէն այդ երկուքն են գործօն անգամ), որք Մնակեան ժառանգութեան խնդրոյն կանուխէն յարաբերութիւն և շահ ունեցող անձինք են, և առանք ինքզինքնին պաշտպանելու համար այդ պաշտօնական յայտարարութեան դիմած են:

Մնակեան ժառանգորդք տակաւին կողտան Վարչութեան քննութեանը, որմէ պիտի տեսնուին թէ ինչ զեղծմանք և անիրաւութիւնք եղած են Մնակեան ժառանգորդաց: 1000 սակի սուտ ժառանգորդաց արուիլը իբրև «թէրքի տավա» և «արէֆի նիզտ» կը փաստաբանէ Սեթեան էֆէնտի, արդեօք սուրիշ սուտ ժառանգորդներ ևս եթէ ելնէին և դատաւարին, անոնց ևս 1000 սակի բաժին հանել պիտի տային:

Ուշադրութեան արժանի է նաև Տնտեսական խորհրդոյ յայտարարելը թէ ժառանգութեան գործոց կարգադիր մասնաժողովը իւր հաշիւները աւած է եղեր, բայց երեւոյթ. ժողովոյ մէջ Վարչութեան նոր յանձնարարութեան օր այդ հաշիւները ստանայ:

Ի դիմաց Մնակեան ժառանգորդաց Թորոս Գարագաշ Կիրակոսեան  
12 օգոստ. 1883

Ազգ. ժողովոյ վերջին նստին մէջ կատարուած դէպքը քննելու համար երկու անգամէ՛ մին շայ և միւրը աստիկ, բաղկացեալ Յանձնախումբ մը կարգուեր է ի Բ. Դուռն:

Մագուտեան Սիմոն պէյի կայս պատար կանչուած ըլլաւն լուրը սուտ ելաւ:

Գաղ. ժողովը յաւանքիկայ շորեքաբթի օր իւր նիստերը շարունակել պիտի սկընի:

Կըլտեմք թէ քանի մը երեւոյթական միտարներ են էջմիածնի Գեր. Վահրամ Կպիսկոպոս Մանկունին Պատրիարքական Տեղապահ կարգելու, եթէ Ս. Պատրիարք Հօր հրաժարականն ընդունուի:

Թէ այսպիսի ընտրութիւն մը Ազգին օգտակար է թէ՛ մնասակար, ի հարկին պիտի բացատրեմք:

Յար՛ Ս. Պատրիարքի հրաժարման վրայ խօսելով, այս կը յայտնէ որ այն մէկ քանի ինքնակոչ երեւոյթականները Ազգ. ժողովէն դուրս հանուելով խառն պիտի պատժուին, որպէս զի ուրիշներ ալ անոնց օրինակին հետեւելու չհամարձակին. բաց աստի, կըրէ, այդ անձերէն մին ասոն և մէկ տարիներէ ի վեր Ազգ. ժողովոյ մէջ կը բազմի, մինչդեռ ըստ ներքին կանոնագրութեան՝ երեւոյթական մը վեց տարիէ աւելի չը կրնար կրեւոյթական մնալ: Սակայն պէտք է դիտել թէ՛ երեւոյթական մը պաշտօնավարութիւնը տարբարի կը աւել:

Ն Ե Ր Ք Ի Ն

Աւելի օր նիգոյա իշխանը մայրաքաղաքը բնակող Գորատաղցիներու կողմանէ ըստուար պատգամաւորութիւն մ'ընդունեց. պատգամաւորը, որոնց թիւն հարիւրի կը հասնէր, սիրով ընդունուեցան իրենց վեհապետին կողմէ. պատգամաւորութեան գլուխ, Գորատան Մարգո Գորատաղը յանուն իւր հայրենակցաց, գեղեցիկ ուղերձ մ'արտասանեց, որու իշխանը մէկ քանի բառով պատասխանեց. «պա իշխանը մէկ քանի պատգամաւորաց հետ առանձին տեսակցեցաւ. Գորատաղի նախարարներն ալ օոյն պահուն իշխանին քով կը գտնուէին»:

Սոյն տեսակցութեան վերջ իշխանը, իւր պատերազմական գործոց նախարարը և երկու թիկնապահներն, ինչպէս նաև վեհ. Սուլթանին թիկնապահներէն նաև. ըթ փաշան, Ահմէտ Ալի փաշան և իսմայիլ պէյն հետ առած Սիրքէճի-իսկէ. լէօիէն կաւքով Յէնէր գնաց, սւր Յունաց Պատրիարքին այցելութիւն տուաւ:

Յունաց Պատրիարքական փոխանօրդը և գործակատարը Պատրիարքարանին դըրան առաջ իշխանը դիմաւորեցին և զայն եկեղեցի աւաջնորդեցին, սւր Յունաց պատրիարքը և Սինհօգի անգամները պարագային յարմար զգեստներով իշխանին կապուէին. Ս. Պատրիարքը յունարէն լեզուով կարճ ուղերձ մ'ըսաւ, որ գաղղիներէն թարգմանեցաւ. ապա ամենքնին ի միտօին եկեղեցի մտան, սւր գոհաբանական աղօթք մը տեղի ունեցաւ. յետոյ իշխանը ընդունուելութեան օրհնաւ աւաջնորդուեցաւ, սւր իբրոյ հանդիսականաց օշարակներ հրամցուեցան, Յետոյ իշխանը Պոլսոյ մէկ քանի հաշակաւոր շէնքերն այցելեց:

Ինչպէս յայտնի է, Գորատ-փաշայի հասարակութիւնը, գրամանենգութեան համար ամբողջանալ Դանիէլ և Ստեփան երկու եղբարց արձակման վրայ, շնորհակալութեան ուղերձ մը պիտի մտաւոյցանէր վեհ. Սուլթանին:



Փոր կրօն է՝ այս ուղերձը այսօր պիտի ներկայացուներ, բայց բարձր պաշտօնատար մը այս դահլիճում թեան ցոյցն արգելած է :

Փոր սոյն տողերը գրելով հանդերձ, ցաւ կը յայտնէ՝ այսպիսի արգելքի մը համար և կրօն է՝ այսպիսի ցոյց մը թէ Օգոստ. Սուլթանին և թէ իւր հրատարակած պատիւ չը բերեր :

— Տարածանէլի կառավարիչ Ահմէտ Հըֆօղի փաշա իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ :

— Կը լսեմք թէ՝ հաշակաւորն Տէլի Մէհմէտ, Գոմըրո գնդապետին մարդասպանը, մէկ քանի օր առաջ բանտին մէջ մեռեր է :

— Վեհ. Սուլթանը նիքօւ իշխանին աճուսին Միլէնա իշխանուհւոյն Շէֆագաթի պատուանշանին մեծ ժապուէնը շնորհեց. սոյն նշանը Չէթինեէի Օսմ. գեապանատունը պիտի շրջուի, ուրկից իշխանուհւոյն պիտի յանձնուի. իշխանը այս առթիւ Վեհ. կայսեր ջերմ շնորհակալութիւն յայտնեց է :

— Հինգ շաբթի գիշեր Պէոյիւքտէրէյի առևտական գեապանատան մէջ տեղի ունեցած պարահանդէսը էքսորէս հետեւեալ կերպով կը նկարագրէ :

« Ռուսական գեապանատան մէջ հինգ շաբթի գիշեր արուած պարահանդէսն արտօքայ կարգի չբեզ կերպով կատարուեցաւ, գեապանատան Վասիլի Վրայ

նայող ճակատը փռաւոր կերպով և ընտիր ճաշակաւ զարդարուած և զօյնզօյն լապտերներով լուսաւորուած էր, հիւսիսային կողման դարձած օւ պատշաճ ներքն ևս զբոյակներով զարդարուած և գունաւոր լապտերներով լուսաւորուած էին. պարտիզին մէջ ալ ծաղիկներուն և մացառներուն մէջանդ պղտիկ լապտերներ և ամեն կողմը չինական լապտերներու երկար շարքեր կերակէին :

« Իշխանը 44 ին հասաւ և նաւամատային վրայ դեպանին և գեապանատան բարձր տնդամներուն կողմէ ընդունուեցաւ, մեծ սանդուխին գլուխը կայտաւէր տիկ. Նէլիտօֆ, օրու իշխանն իւր բազուկը շնորհեց, ազգային հագուստ կը կըրէր, ինչպէս նաև հետն եղողները, ապա իշխանը տիկնանց ներկայացաւ եւ նախ տիկ. Նէլիտօֆի հետ պարեց. տիկ. Ն. այլը և տիկ. Կրիշէնգօն դէմ առ դէմ ունենալով, մեծ ճաշարահին մէջ ընթրիք մը արուեցաւ իշխանին, գեապանաց, կայս. պալատան սանդամօց, բարձրաստիճան պաշտօնատարց. միւս հրաւիրեալք դարձածներուն վրայ ընթրեցին, վերջապարին հարիւր զոյգ պարող կը համրուէր, նուազն ընտիր էր, գինին ու շաքարակներն առատ էին, պարը մինչև ժամը ինը տևեց և շատ քիչ անձինք այդ ժամէն առաջ մեկնեցան » :

— Վագրթ իւր այս աւուր քաղաքական տեսութեան մէջ Ս. Պատրիարքին

հրատարականին վրայ հեռեւեալ աստիճան կը գրէ :

« Հայոց Ս. Պատրիարքին նորէն հրատարիւր Պօլսոյ բարձրագոյն ակաթոց շատ մը խօսակցութեանց և ենթագրութեանց նիւթ եղած է. Բերայի լրագիրք սոյն դէպքին քաղաքական գոյն մը առ կուզեն. բայց մենք բնաւ այդպէս չենք կրնար մտածել :

« Հայոց ազգին Օսմ. պետութեան ներքե վայելած խաղաղութիւն և աւազարուութիւնը աշխարհի յայտնի է. նոյնպէս Օսմ. պետութեան Հայոց ազգին վրայ ունեցած վատահուստիւնը բնաւ կաւկած չը վերցնեց. հեռաւարար այսպիսի հրատարականներ և այլ մեկնութիւնք վեհապետին և իւր հպատակի միջև եղած միութիւնը և ներդաշնակ յարաբերութիւնները բնաւ չեն կրնար խախտել. զայս բարձր ձեռնհաս և լուսամտ անձինք շատ լաւ գիտեն » :

— Բերա Եէնի-Շէհրի պահապանին տունը գող մանելով, զոյգ մը տարճանակն ու ձեռք մը հագուստը և 400 զրշ. առնելով փախեր են :

— Օգոստ. 26 ի քօլէրային ցանկը  
Աղեքսանդրիւ 33 մեռեալ  
Տէմէնհօւր 7 «  
Չանազան տեղեր 15 «  
Գահիրէ ոչինչ «  
Մինչև օգոստ. 23 Ղարպիէ, Ճիրէ, և Եւսուֆ կոչուած տեղերը 656 հօղի մեռած են :

Հեռեւեալ օրը կէս օրէ վերջ, դերակոման այս անգամ առանց ծպտելու ճամբայ ելաւ :

Գիտէր թէ Լուազօ կէս օրին իր գործին զլուսն ըլլալու էր, ու հեռաւարար վտանգ էր թէ ուղտին պէս պիտի կրնար լրտեսութեանը պարագիլ :

Սանդուխն ու ամայի փողօցը դիւրաւ գտաւ, ճանչեց պարտիզի դուռն, ուրկից մարդն անհետ եղեր էր :

Այս կէս մը փտած փայտեայ վանդակադուռը, հազիւ կանգուն կեցեր էր կարծես :

Անջատ անջատ սիւնակներու մէջէ՝ ամենագորշելի ճաշակաւ խեցեղորդ կամար մը կը տեսնուէր, բայց սոյն զարդարուն խորշին վերևը մաղցուն տունկերու ու մացառներու անճանչ խառնուրդ մը միայնակերէր, որ այս վայրին Գոսուրքայի « մագիլի » (1) մը տեսարանը կրնձայէին :

Մարդասպանութիւններ գործելու ամենայնաբար տեղ մ'էր անի :

Սոյն թաւաւաքէն ահագին ծառեր կը բարձրանային, որ ժամանակաւ ծառուղիներ կազմած ըլլալու էին, բայց այս ծառուղիները մորիններուն տակ կամաց կամաց աներևոյթ եղեր էին :

Սէպիւն հազիւ կրցաւ սոյն կայս անտառէն ալ աւելի վեր նշմարել, առն մ'որ պարտիզին չափ տարօրինակ էր :

Բարձրօվին աշտարակի նմանող առն մ'էր, նա մանաւանդ Բիզի (2) մէկ կողմ հակած աշտարակին, ինչու որ ուղղութենէն շատ խտտորած էր :

(1) Գոսուրքայի մէջ թանձր թաւաւաներով ծածկուած տեղերը սամաքիս կը կոչուին, որ յանախ աւազակներու ապաստանարանն են :

(2) Իտալիոյ մէջ :

Ստուգիւ ամենէ մտերիմ բարեկամն իսկ չպիտի ճանչնար զինք :

Արդէն տեսնելով ծանօթներէն շատերն որ առանց իրեն ուշադրութիւն ընելու, ակուսթ մտեր էին, իրեն շատ աղէկ ծպտեալ ըլլալը հասկցաւ :

Գ. Լուազօ կէս գիշերին երևցաւ :

Գնազգետաւը հաներ ու շաղանակագոյն թիկնոց մը հագեր էր, որով միջին հասութեամբ կերպարանք առեր էր :

Գօլուածքն այն աստիճան համեմատութեան ու պարկեշտութեան հօլ մ'ունէր, որ պահիկ մը դերակոմօրը վախցաւ որ խաբուած չըլլայ, բայց անգամ մը գործին մէջ նետուած ըլլալուն, ալմիւնչ ծայրը քալել կուզէր :

Ուտի թողուց որ Գ. Լուազօ քսան քայլ մը յաւաջանայ, — սօի առանց տեսնելու, դիտելու համար լաւ հեռաւորութիւն մ'է — ու բեռնակրի պէս ծանր քայլով ու երերտկալով անոր հեռակի սկսաւ :

Սեպիւն գերը վարպետօրէն խաղալուն, շատ ուրախ էր :

Բայց ուրախութեան վրայէն ամպ մ'անցաւ, երբ տեսաւ որ մարդը փոխանակ Սէն-Գ'Օնուէ արուարձանը դիմելու, ուր կը յուսար թէ Գ. աը Բանդուկօյի տունը մտնէր, բարձրօվին հակառակ ճամբայ մը բռնեց :

Արդարև Լուազօ պողոտայէն բաժնուեցաւ և Շօսէ-ա'Անդէնի փողոցէն վեր ելնել սկսաւ :

Հուսաւ քայլերով, առանց անպարելու ու անառնց անցորդներուն նայելու կը քալէր, մտազբաղ մարդու քալուածք մ'ունէր :



Մէտրիքի նէղարեթի միութեամբի վերականգնելու  
հիմարի Կ. Մ. Ս. Գ. Ս. Բ. Ա. Ս. Ն. Ս. Գ. Բ. Ա. Ս. Ն. Ս.

Սոյ և Կիւմիսի միութեամբի  
մէտրիքի նէղարեթի վերականգնելու  
Ս. Ս. Ա. Ս. Ա. Ս. Ա. Ս. Ա. Ս. Ա. Ս.

ՂՈՒՆՆԵԻԹ-ԻԻԼ-ԼՈՒՂԱԹ  
նամ լուրաբ քիթապարուն թապի. ու նաչիրի  
ԳԱՐԵԳԻՆ ՊԱՆՍՈՍԻԱՆ

28 ինչի հիւրի քիթապարուն  
հետեւ մէղքիւրեն թէքմիւր 40-45 հիւր  
թապիին օլունմուշ իսէ անէ, հալի պուլուն.  
տուղու լուրաբին մանէալարեն վէ միսալլերին  
քէտրեթիւնտէն պու թապիինին եանլը վէ իշ-  
պու էտերին 60 հիւրէ եանի 120 Փորմանա  
պալիգ օլաճաղը անլաչլըղընտան, ապոնէ  
պէտէի տախի պէր վէճը աթի թէպուրի օ-  
լունմուշ արը:

Ղրուշ  
Տէրասատէթ իչին Մ. 20 ղրուշտան 75  
Վիլանաթ իչին 100  
Պէհէր հիւրին Ֆիլաթը 2

Ապոնէ եաղըլմագ իսթէյնլէր Տէրասա-  
տէթտէ 2ագմագճըլարտա Յակոբեան կանըն.  
տա Ն. 13 Արամեան մաթպասարնա միւրա-  
ճաաթ իթմէի Վրլէր:

**ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԸՆԹԵՐՅԱՐԱՆ**  
**Ի ՊԵՏՍ ԴՊՐՈՑԱՑ**  
Երկրորդ տպագրութիւնն  
**Կ. ՊՕԼԻՍ**  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ  
**1883**

Սոյն Ընթերցարանը պատուական ղառա-  
գիրք մ'է տղայոց համար եւ ըստ ամենայն  
օգտակար. առաջին տպագրութիւնը քիչ ա-  
ռենի մէջ սպառած ըլլալով, երկրորդ անգամ  
հրատարակեցաւ Արամեան տպարանէն:  
Կըճտօնուի գրազանաւագ քով 100 փրջ:

**ԴԵՂԱՐԱՆ ՏՆ ԱՆԼԱԶՎԵՐՏԵԱՆ**  
**ԵԵՆԻ ՃԱՄԻ ԲՈՍԹԱԻԱՆԻ ԴԻՄԱՑ**  
**ԹԻԻ 12**

**ՁԿԱՆ ԻԻՂԻ**  
**ՏԷՓՕ**



**ՁԿԱՆ ԻԻՂԻ**  
**ՏԷՓՕ**

Այս անգամ Եւրոպայի  
գործարաններէն ամենէն  
ընտիր եւ թարմ դեղեր յա-  
ճախողաց կը ծախուին ա-  
ժան գնով: Նոյնպէս գե-  
ղարանէս մեծ ինսամով  
պատրաստուած «Էլիբլիր»  
տը Բէքսին» անուն օգտա-  
ւէտ դեղը կը գտնուի: Այս  
գեղը թէ ստատոքսի հի-  
ւանդութեան կամ դժուա-  
րամարութեան, եւ թէ յղի  
կանանց սիրտ խառնուուքի  
եւ այլն տկարութեանց հա-  
մար յոյժ զօրանորեւ կազ-  
դուրիչ բաղադրութիւն մ'է  
որուն գործածութեան կեր-  
պը դեղարանէս կը տրուի:  
Նաեւ ամեն տեսակ օգտա-  
ւէտ հանքային թարմ ջու-  
րեր ալ բերել տուած ենք:  
Մասնաւորապէս նոր-  
վէկիոյ ձկան իւղի ամենէն  
ընտիր տեսակէն, թէ օխա-  
յով եւ թէ չիչերով խիստ  
ածան գնով կը ծախուին:  
Դեղարանիս մէջ Տոք-  
թէօր Այվաղեան էֆ. ա-  
մեն օր ժամը 7էն մինչեւ  
10 գտնուելով, իրեն զի-  
մող հիւանդները, նաեւ ար-  
զայոց հիւանդութիւնները  
պիտի դարմանէ: Նոյնպէս Այվաղեան էֆ.  
մի միայն ուրբաթ օրերը ժամը 7էն մինչեւ  
10 իրեն զիմող հիւանդները ձրի պիտի  
դարմանէ, եւ նոյն օրը դեղարանէս խիստ  
կարօտեալ աղքատաց դեղերը ձրի պիտի  
տրուին:

**ՂԱԼԱԹԻՈՅ ՊՕՐՍԱ**

Օսմ. Գոնա. Գոյ. երէկ իբրկուսն	11-20
» » Բայ. այս առաւուս	-
ԸՆԹԱՑԲ ԱՐԺԷԹՂՔՈՑ	
Ընթերցի երկաթուղի Ֆրանց	54-52
Քրտավայ Օսմ. Լիք	3-60
Քղթաղբամ » »	1060
ԸՆԹԱՑԲ ԴՐԱՄՈՑ	
(Օսմ. ոսկին 100 դուրուշէն)	
Անդրիկն. ոսկի » » » »	110-
Գաղղիակն » » » »	87-03
Բօլ » » » »	90-10
Քրիմից » » » »	51-25
Գարպոն թուղթ » » » »	9-24
Գարպոն արծա. » » » »	90-10
Մէճիտիէ » » » »	108- 5
Վեղնոց » » » »	104-20
Հինգնոց » » » »	104-20
Մէթալիք » » » »	101-

**ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ**  
**ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԵՅՑ**  
Կը բաղկանայ 120 երեսէ եւ 24 դուրսինե-  
րէ. հեղինակն է Պետրոս Մ. վարդապետ Կալ-  
հօկեցի նախկին առաջնորդ Սղերդու. կեդրո-  
նատեղին է Արամեան տպարան ի Յակոբեան  
խան թիւ 13. նաեւ կը գտնուին գրազանա-  
ւաց խանութներն ի գին 5 դանկան:

**ԻԵՐՈՒՔԻՐ ԳՕԼԱՆՃԵԱՆ**  
Գալաթիտա Գարաքէօյ ճատտէսինտէ թը-  
րապայ օթաօթիւնու քարշըսընտա 12 նումէրօ-  
լու բէրուքէր տիւքեանը միւճէտտէտէն թէչ-  
քիլ օլունուպ, տիւքեանընա բաղպէթ իսէն  
միւլթէրիլէրինի հէր վէճէ իյէ մէմուսն իտէճէ-  
կինի իլան իտէր. պունու իյէ պէրապէր ա,  
պոնէ օլմաք արդուսինտէ պունուսնլարը տա-  
խի էնվէն Ֆիլաթըլէ ապոնէ իտէր:

**ՏԵՐ-ԻՄԲԱԿԻՐ**  
**Մ. Յ. ՄԱՆԻՔՅԱՆ**  
Իրգա փաշա խան քիւ 14

Սէււոն դեա կը յուսար որ Սէն-Լազա փողոցէն  
դառնալով Սէն-Ղ'օնուէ տրուարձանն ելնէր: Բայց քիչ  
մը վերջ այդ յայն ալ պարտպ ելաւ:  
Պ. Լուազօ՝ Պլանչ փողոցը բռնեց, Բիկալ փողոցէն  
անցաւ, ու վերջապէս քաղաքադուսը հասաւ: Վերկից  
առանց ետին նայելու դուրս ելաւ:  
Արտաքին պողոտային վրայ աջ կողմը դարկաւ և քիչ մը  
վերջ նեղ և խորտ ու բորտ փողոց մը բռնեց, որ Մօն-  
մասուաը բլրակը կը տանէր:  
Բնաւ չէր կտակածէր որ մէկն իրեն կը հետևէր:  
Գլուխը խոնարհեր էր և իբր թէ վիշտ կամ ոճիր  
մը սրտին վրայ ծանրացած ըլլար, չորս կողմն ուշադրու-  
թիւն չէր դարձներ. թերևս հօգը չէր թէ ետևն ինկած  
էին թէ ոչ կամ թերևս չէր կտակածէր:  
Սէււոն յանկարծ զանի կորնցուց, փողոցին ծայրը  
գտնուած խիտ ուղղորդ սանդուխէ մը վեր ելնելով  
անհետացեր էր, բայց դերակոմսն ինքն ալ այդ սան-  
դուխին մաշած սաքերէն թիթեակի վեր ելնելով, զանի  
նորէն տեսաւ:  
Այս անգամ Պ. Լուազօ պարտիգի մը վանդակագաւան  
առաջ կայնած, անհանգիստ կերպարանքով մը չորս կող-  
մը կը նայէր ու ձեռքը բանալի մ'ունէր, զոր կղպակին  
մէջ կը խօթէր:  
Դերակոմօը դրան գոցուելուն աղմուկը լսեց ու ըզ-  
դուսալ թեամբ յառաջացաւ:  
Պողոտային զուգահեռական փողոցի մը մէջ կը գըտ-  
նուէր, հակառակ սոյն թաղի միւս ճամբայներուն՝ ո.  
րոնց գրեթէ ամենն ալ Մօնմասուաը բլրակին դէպ ի  
գտաթը կ'եւնէին:

Սոյն վաղոցն՝ որոյ ձախ կողմը հաղիւ մէկ քանի  
տաներ կերևէին, աջ կողմը բաւական ցած պտտ մ'ու-  
նէր, որոյ վրայէ խաչոր պարտեղի մը մեծ ծաւերը կը  
տեսնուէին:  
Ներս մտնելու համար՝ սոյն պտտին մէջտեղ փայտ-  
եայ վանդակագաւա մը կար, ուրկից Պ. Լուազօ մտեր  
էր:  
Իր աճնն էր, թէ ոճիր մը գործելու համար կը  
մտնէր հոն, Սէււոն ինքնին ըսաւ թէ՛ Լուազօ հրաման  
տանելու համար Բանգօւվօյի տունը երթալու պէտք  
չունէր, քանի որ Ամբրիկացին ամեն իրիկուն ափսոս  
կուգար:  
Գիշերը շատ մթին էր և կարելի չէր տեսնել թէ սոյն  
պարտեղն ո՛ւր կառաջնորդէր, բայց Սէււոն մտածեց  
թէ անի բլրակին բարձրը հաստատուած տան մը պար-  
տեղն ըլլալու էր:  
Մասերուն վերը յանկարծակի լոյս մը փայլեցաւ,  
որով կարծիքը հաստատուեցաւ:  
Արդ օնեկեպայան սպասուողը ծածակ բնակարան  
մ'ունէր, որ պէտք է ըսել թէ, մթին գործ մը կառա-  
րելու շատ յարմար էր:  
Թախծագին ու խորհրդաւոր էր ասի:  
Սէււոն այս առաջին գիւտն ընելուն ուրախ չուրջ  
երկու ժամ սպասեց, որպէս զի եթէ ոճիր մը գործուի,  
օգնութեան վազէ, բայց սունը մթին, տիրաքին ու  
լռիկ մնաց:  
Տեղն աղէկ մը դիտելէ վերջ, Բարեղ իջնելով գեօց  
հագուստը փոխեց, ու ասուն երթալէ առաջ ափսոսըր մէկ  
մ'երևելու հօգ տարաւ: